

Տ. ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Ծնվել է 1959 թ. սեպտեմբերի 13-ին, Էջմիածնի շրջանի Հայթաղ գյուղում:

1966—1976 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1977 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1978 թ. զորակոչվել է սովետական բանակ:

1980 թ. վերադարձել է բանակից և շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1982 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը և հաջորդ տարվա մարտ ամսին պաշտպանել իր ավարտաճառը՝ «Գրիգոր Նարեկացին և Թոնդրակյան շարժումը» թեմայով և արժանացել «գերազանց» գնահատականի:

1983 թ. հոկտեմբերի 16-ին, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1983—85 թթ. եղել է Վեհափառ Հայրապետի գավազանակիրը:

1985 թ. Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ մեկնել է Փարիզ հոգևոր հովվի պաշտոնով տեղի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր տաճարում: Հովվական ուշխատանքը շարունակել է մինչև 1987 թ., միաժամանակ կրոնա-աստվածաբանական գիտելիքները խորացնելով Փարիզի «Ինստիտուտ կաթոլիկ» հաստատության մեջ:

1987 թ. հուլիսին Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի հարկի տակ պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Սողոմոնի տաղերը կամ քրիստոնեական ամենահին երգերը» թեմայով: Նույն թվականի օգոստոսի 1-ին, ձեռամբ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանի, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ստացել է մասնավոր վարդապետության չորս աստիճանները:

1988 թ. փետրվարից մինչև սեպտեմբեր կատարել է Վաղարշապատի վեհորեից տեսչի պաշտոնը:

1988 թվականի սեպտեմբերի 15-ից նշանակվել է Սյունյաց նորակազմ թեմի ընդհանուր տեսուչ և Ս. Տաթևի վանքի վանահայր:

1988 թ. հոկտեմբերին պաշտպանել է «Արարչության թեման Աստվածաշնչում և նրա ժամանակակից ընկալումը» թեմայով իր ծայրագույն վարդապետական թեզը և հոկտեմբերի 8-ին, ձեռամբ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ստացել է ծայրագույն վարդապետության տասը աստիճանները:

Հեղինակ է չորս բանաստեղծական ժողովածուների: